# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

Դատական դեպարտամենտի կարիքների համար գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/42» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«05» հոկտեմբերի 2018թ.
ժամը 10.00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Ավետիք Ավագյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳՀՊ) Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար.

*հանձնաժողովի անդամներ՝*

**Հովհաննես Ստեփանյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Գրիգոր Գաբրիելյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի աշխատակազմի ղեկավար:

Էդգար Տոնականյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար.

Լիլիթ Հովհաննիսյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար.

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/Մհ) Դատական դեպարտամենտի Նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

1. **Տեղեկատվություն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ.**

«ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ն, «Սմարթլայն» ՍՊԸ-ն, Դավիթ Քոչարյան Ա/Ձ-ն, «ՍԱՔԻ» ՍՊԸ-ն, «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում և հրավերով սահմանված կարգով ներկայացրել են ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթերը՝ առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

2. **Տեղեկատվություն՝ «Սմարթլայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ.**

«Սմարթլայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովը արձանագրել է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ՝ մասնավորապես՝ ներկայացված չէ առաջարկվող ապրանքի արտադրողի անվանումը («ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/42» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի N 7 հավելվածի՝ պայմանագրի նախագծի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ- ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ում սահմանված է, որ 9-րդ չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը պետք է ներկայացնի առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը և արտադրողի անվանումը):

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովը որոշեց.

-հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2018թ. հոկտեմբերի 09-ին ժամը՝ 11:00-ին:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի քարտուղարին.

-մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2018թ. հոկտեմբերի 08-ը ներառյալ, շտկել անհամապատասխանությունները:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի

Նախագահ — Ավետիք Ավագյան

Անդամներ՝ — Հովհաննես Ստեփանյան

Գրիգոր Գաբրիելյան

Էդգար Տոնականյան

Լիլիթ Հովհաննիսյան

Քարտուղար՝ — Արուս Խաչատրյան